ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N ՄՊ/249-2020

..26.. 10 2020թ.

Ք.Արտաշատ

«ՄԱՍԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 183 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի, 67-րդ հոդվածի 1-ին կետի «ա» և «է» ենթակետերով, 68-րդ հոդվածի 6-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով «Մասիս բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 12.10.2020թ. թիվ Մ-10482-2020 գրությունը՝

Որոշում եմ՝

1. «Մասիս բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը ավելացնել 58800000 (հիսունութ միլիոն ութ հարյուր հազար) դրամով՝ լրացուցիչ թողարկելով և Հայաստանի Հանրապետության օգտին տեղաբաշխելով 1176 հասարակ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 50000 դրամ արժեքով, իսկ 8842 (ութ հազար ութ հարյուր քառասուներկու) դրամը հանդիսանում է որպես էմիսիոն եկամուտ:

2.Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2007թվականի նոյեմբերի 30-ի թիվ 183 որոշմամբ հաստատված. «Մասիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 132350000 (մեկ հարյուր երեսուներկու միլիոն երեք հարյուր հիսուն հազար) դրամ, որը կազմում է 2647(երկու հազար վեց հարյուր քառասունյոթ) հատ 50000 (հիսուն հազար) դրամ անվանական

արժեքով հասարակ(սովորական) բաժնետոմսեր, իսկ 8842(ութ հազար ութ հարյուր քառասուներկու) դրամը հանդիսանում է որպես էմիսիոն եկամուտ:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 2647 բաժնետոմսերը տեղաբաշխված են , սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են»:

3.Հանձնարարել . «Մասիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

Восстановимая подпись

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN GARIK 2811870695 Գ.ՍԱՐԳՍՅԱՆ